«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը քսաներեքերորդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«***տաղավար՝*** առևտրական գործունեության իրականացման համար նախատեսված բացօթյա թեթև շինություն.»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը «տոնավաճառները (վերնիսաժները)» բառերից հետո լրացնել «,տաղավարները» բառերով:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1-ին և 15.2-րդ մասերով.

«15.1. Ձմերուկի, սեխի, դդումի և մրգերի վաճառքը իրականացվում է **խանութներում, կրպակներում, շուկաներում, տոնավաճառներում, տաղավարներում՝ տակդիրների կամ դարակաշարերի վրա, որոնց նվազագույն բարձրությունը պետք է լինի առնվազն 15-20 սմ: Տոնավաճառներում, տաղավարներում ձմերուկի, սեխի, դդումի և մրգերի վաճառքի կետերը պետք է ունենան ծածկեր կամ հովանոցներ: Արգելվում է ձմերուկը, սեխը, դդումը և մրգերը վաճառել կտրած կամ մասերի բաժանված:**

15.2. Սպանդանոցային ծագման տեղական արտադրության կենդանական ծագման մթերքի և հումքի նույնականացումը ապահովելու նպատակով N 5 ձևի անասնաբուժական վկայականը կամ պիտակը կամ պիտակի պիտակը փակցվում է սպառողներին տեսանելի տեղում:»:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«***ճաշացուցակ՝*** կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի, հացաբուլկեղենի և (կամ) գնովի

ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ խոհարարական արտադրանքի անվանման (փոխարինիչների օգտագործման դեպքում պարտադիր նշումով), հիմնական բաղադրիչների, պատրաստման եղանակի, **սննդային արժեքի (ներառյալ էներգետիկ արժեքը՝ արտահայտված կիլոկալորիաներով),** զանգվածի և գնի նշումով.

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին)։ Ճաշացուցակը կարող է լինել թղթային կամ էլեկտրոնային ցուցատախտակի վրա՝ պարտադիր հայերեն լեզվով (անհրաժեշտության դեպքում նաև օտար լեզվով)։ Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի անվանումը (փոխարինիչների օգտագործման դեպքում պարտադիր նշումով), հիմնական բաղադրիչները, պատրաստման եղանակը, **սննդային արժեքը (ներառյալ էներգետիկ արժեքը՝ արտահայտված կիլոկալորիաներով),** զանգվածը և վերջինիս այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման։»։

Հոդված 6. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը «9-րդ հոդվածի 3-րդ մասի և 15-րդ մասի «գ» կետի» բառերից հետո լրացնել «15.2,» բառերը։»։

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը։

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 158-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին և 7.2-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ և 50-րդ մասերով.

«7.1. Հանրային սննդի օբյեկտներում ճաշացուցակին ներկայացվող պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

7.2. Սույն հոդվածի 6.1-ին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով։»։

«47. Ձմերուկի, սեխի, դդումի և մրգերի վաճառքը՝ առանց տակդիրների կամ դարակաշարերի, կամ եթե դրանց բարձրությունը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափին, կամ տոնավաճառներում կամ տաղավարներում իրականացվում է առանց ծածկերի կամ հովանոցների, ինչպես նաև կտրած կամ մասերի բաժանված՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

48. Սույն հոդվածի 47-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով։»։

49. Սպանդանոցային ծագման տեղական արտադրության կենդանական ծագման մթերքի և հումքի նույնականացումը ապահովելու նպատակով N 5 ձևի անասնաբուժական վկայականը կամ պիտակը կամ պիտակի պիտակը սպառողներին տեսանելի տեղում չփակցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով։»։

50. Սույն հոդվածի 49-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով։»։

Հոդված 2. Օրենսգրքի **238** -րդ հոդվածի 1-ին մասի «46-րդ» բառերը փոխարինել «46-րդ, 47-րդ» բառերով։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը։